

կը յորդորէին որ քիչ մը փայտ գնէ ,
ինքը կ'ըսէր . Շարեկամք , կը տես-
նեմ որ աս բանս ձեզի հարիւր սկուտի
կը նստի : Այսպէս երկար ատեն ա-
ռանց տէրութեան օգնութեան իր ու-
նեցածովը կը պահէր ինքզինքը ու իր
քովլինները : Իր մեռնելին քիչ առաջ
Դուզովիկոս ԺԶ քիչ մը բան տուաւ
իրեն և հաստատած դպրոցին համար
ալ մասնաւոր եկամուտ կապեց :

Ո՞ւաւ Ափէ քահանան յամի 1789ին
դեկտեմբերի 23ին , Եօթանասունը օ-
թը տարուան , Ո՞նթիոնի ծննդեան
տարեդարձին օրը : Աւ 1790ին փետ-
րուարի 23ին , Ֆօշէ քահանան որ թա-
գաւորին սովորական քարոզիչն էր , վրան
դամբանական Ճառ մը խօսեցաւ ազ-
գային ժողովին նուիրակներուն առ-
ջին : Հաջորդ տարին ինչպէս որ ինքը
կը փափաքէր՝ Փարիզի մէջ խլից և հա-
մերց դպրոցը հաստատուեցաւ . 1817ին
թագաւորական գիտութեանց Ճեմա-
րանը՝ Ափէի երախտեացը փոխարէն
առաջարկեց որ իրեն վրայ ներբող մը
շնուրի . և աս Ճառիս մրցանակն առաւ
պարոն Պիէպիան՝ որ Ոյուանի խլից և
համերց դպրոցին վերատեսուչ էր .
Ո՞նայն թէ Ափէի արդեանցն համար
շատ պղտիկ էր աս վարձքս . մարդիկ
հասարակօրէն այնպիսի մարդկանց ար-
ձաններ կը կանգնեն , որոնք իրենց փա-
ռացը համար ապրեր ու մեռեր են .
ընդհակառակն շատ անգամ անտես կը
մնան լաւ և բազմարդիւն մարդիկ , ո-
րոնք իրենց բովանդակ կեանքը ընկե-
րութեան ու անոր բարույն համար կը
զո՞յէն : Ոյերես աս բանս անոր համար
կ'ընեն մարդիկ՝ դիտնալով որ առջիննե-
րուն յիշատակը իրաւցընէ կարօտ է ար-
ձանի՝ որ գէթ անով մնայ անուննին .
իսկ բարերարաց իրենց ըրած երախտի-
քը ու արդիւնքը բաւական են անմա-
հացընելու իրենց յիշատակը . քանի որ
Ափէի դիտազնական գործոց արդիւնքը
կը վայելին մարդիկ , անունը անմուա-
նալի պիտի մնայ աշխարհիս վրայ :

Աբու :

Այսէն ազգաց մատենագրաց մէջ ի-
րաւամբք հայր և հեղինակ լեզուի ը-
սուեր են այն մարդիկն որ չէ թէ միայն
գիրք գրելու , հապա իրենց գրուածոցը
մէջ ազգային լեզուն ու մատենագրու-
թիւնը դուրս ցատքեցընելու և այլոց
սիրելի ընել տալու մասնաւոր ջանք ու
փոյթ ունեցեր են : Այս մեծ պարծան
քը արժանապէս ստացեր է նաև Աբէ¹
անուանի Գերմանացին , որ իր լուսաւոր
հանձարովն և անոյշ ոճովը գերմանա-
կան պանծալի մատենագրութիւնը ա-
ւելի կերպով մը փառաւորեր ու հոչա-
կեր է : Իրաւ է որ Գերմանացիք Աբ-
էն առաջ ալ շատ հոչակաւոր գրիչ-
ներ ունեցեր են , ոմանք ալ թէրեւս եր-
բեմն զինքն ալ գերազանցեր են , սա-
կայն ոչ ոք եղեր է իրեն պէս գրեթէ
ամէն բանի վրայ գրող և ամենուն հա-
մար ալ պատիւ ու փառք լսող . ափսոս
որ բարոյական մասին մէջ քիչ մը ու-
ղիղ փիլսոփայութեան և Ճմարիտ
տրամաբանութեան դէմ սկզբունքներ
ալ ունեցեր է . և Ոփինոզա անաս-
տուած հեղինակին գրքերն ալ շատ կար-
դացած ըլլալով՝ անոր ծուռ կարծեաց
մէջն ալ ընկեր է՝ զլուտուած բնու-
թեան մէջ փնտուել ու զելով :

Աբէթէ ծնաւ 1749ին Այս գետին
վրայ եղած Ֆրանքֆորթ քաղաքը՝
ազնուական ու հարուստ ծնողաց տը-
նէ : Հայրն անուանի փաստաբան ըլ-
լալով՝ ուզեց որ տղան ալ նոյն պաշտօնի
մէջ զնէ . ուստի Աիբսիա քաղքին հա-
մալարանը դրաւ զինքը իրաւագիտու-
թիւն սորվելու : Աիբսիայէն Ոթրազ-
պուրկ անցաւ Աբէթէ , և քիչ ատենուան
մէջ վրան մեծ յառաջադիմութիւն տես-
նելով՝ վարժապէտութեան պատիւն ու
աստիճանը տուին իրեն : Բայց Աբէթէի
վառվըուն ոգին ու աշխոյժ երեա-
կայութիւնը ուրիշ վիճակի և մեծ փա-
ռաց պիտի հասցընեն եղեր զինքը : Ա-
րաւագիտական և օրինաց վերաբերեալ
ուսմանց հանդարտ զբաղմունքը մէկդի



ԱՅՆԵ

Թողով, Ա էշտ Ա էրթէր պատահեց ըստած գիրք մը հրատարակեց, որով չէթէ միայն Գերմանիա՝ հասպա նաև Վաղղիոյ մէջ ալ իր անունը շատ հռչա կուեցաւ, ու ամէն կարդացողներէ գովեստ ու զարմանք լսեց։ Իեթէ սկսած ասպարիզին մէջ առած առաջին փառաւոր քայլը տեսնելով՝ շատ քաջալերուեցաւ, և անկէ ետքը զրիչը ձեռքէն չթողուց։ Իմէն ուսմանց սէր ու յարմարութիւն ունէր։ բնաբանութեան, բնական պատմութեան, գեղեցիկ դպրութեանց, որոնց ետեւէ ըլլալով թատրերգական բանաստեղծութիւններու զիւցազնական երգեր շարագրեն՝ իրեն սիրելի զբաղանք ու զուարժութիւն դարձեր էին։

Ա յմարի իշխանը Իեթէի գրուածները կարդալով ու անոր կարգէ գուրս հանձարը տեսնելով՝ իր արքունիքը կանչեց զինքը, և ամէն պատիւ և սէր ցուցընելէն զատ՝ տէրութեան խորհըդական ալ ընտրել տուաւ։ Ետքը իր հետն առած ճամբորգութեանն ալ եւլաւ, ու երբոր հռոմ հասան՝ Խտալացի հռչակաւոր Անթի բանաստեղծը Իեթէի հետ ծանօթացաւ, և այնպէս

անոյշ եկաւ իրեն գերմանացի բանաստեղծին ոչն ու զուրցուածքին կերպը, որ նոյն ատեն վերոյիշեալ Ա էրթէր վիպասանութեան քանի մը կտորները իտալերէն թարգմանեց։

Իեթէ իր ատենի եղած ամէն աղգաց իմաստնոց հետ թղթակցութիւն ունէր, և պէտք եղած ատենը անոնց խորհուրդ կը հարցընէր։ անոր համար ալ բոլոր աշխարհք հռչակուած էր իր անունը և ամէն Ճեմապարհորդք Ա էյմարի քաղքէն անցնելու ատեն՝ Իեթէի հետ ալ տեմնուիլը իրենց մեծ պատիւ կը սեպէին։ Աւրոպայի ամէն Ճեմարանները զինքը իրենց ընկեր գրել կը փափաքէին, Վաղղիոյ Ճեմարանն ալ հետը թղթակցութիւն ունէր։ և Ա փոլէնն Պինափարթէ Ա չփըրթ քաղքին մէջ Իեթէի պատիւ մը տալ ուզելով՝ զգեստին վրայ եղած պատույ նըշանը փրցուցեր ու անոր կուրծքին վրայ կախեր է։

Իեթէ իր երկարակեաց կենացը ատեն շատ անուանի գրքեր ու տեսակ տեսակ թատրերգութիւններ գրելն ետքը 1832թն մեռաւ։ այն տարին նշանաւոր եղաւ նաև Քիւվիէ Վաղղիացի

անուանի բնախօսին և Ա սթր Ա քոթ
Ի՞նդղիացի հռչակաւոր վիպաքանին մա-
հուամբը : Իր մահուանը վրայ սուգ ա-
ռին չէ թէ միայն Գերմանացիք, հա-
պա նաև ամէն տեղի իմաստունք և ի-
մաստամէրք . և Ա էյմարի իշխանը իր
ազգատոհմին գերեզմաննոցը թաղել
տուաւ զինքը Շ լլէր բանաստեղծին
քով . ՖրանքՓորթի և ուրիշ Գերմա-
նից քաղաքաց մէջ ալ իրեն պատույն
արձաններ կանգնեցին :

Բ Ն Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ո Ւ Թ Ւ Ւ Ն

—
ԱՍՏԵՂԱԲԱԾԽՈՒԹԻՒՆ

Ժամանակի շախոյն Հրայ, և Ա նէ ի՞նչո՞ւ
ուետ է ժամանացները շրէւլ :

Ի Մ Է Ն Ը գիտեն թէ ընկերութեան
օգտակար, մանաւանդ թէ հարկաւոր
միջոցներէն մէկն ալ ժամանակին չափն
է, որով մարդուս ամէն գործքերը կ'ուղ-
ղին : Շ արժման և ժամանակի գաղա-
փարները այնպէս տպաւորուած են մեր
մտացը մէջ՝ որ ժամանակ ըսելով միշտ
հետը մէկտեղ շարժմունք կ'ըմբռնենք,
և չենք կրնար կերպով մը այս երկուքն
իրարմէ զատել . և կամ թէ այսպէս ը-
սենք, ժամանակ ըսելով կը մտածենք
անբաւ կէտեր որ անընդհատ կը հոսին
յաւիտենականութեան մէջ . անոր հա-
մար որ և է միօրինակ շարժում մը, կը ը-
նայ առնուիլ իբրև չափ յաջորդական և
միակերպ ընթացից ժամանակին : Ի այց
դժբախտաբար մեր չորս դին եղած
մարմնոց սովորական շարժմունքները
չենք կրնար այս բանիս ծառայեցընել,
վասն զի կամ միօրինակ չեն՝ զանազան
ընդդիմակալութեանց պատճառաւ, ո-
րով իրենց շարժումը կ'այլայլի, կամ
թէ քիչ ատեն տեւելով՝ մեր պիտոյքը
չեն կրնար լեցընել : Ուրեմն պէտք է
ուրիշ հնարք մը մինտեւլ :

Ի ս բանիս մեծ նպաստ եղան Ի ստե-
ղաբաշխութիւնն ու Բնաբանութիւնը,
որ առաջնորդեցին ոչ միայն ժամանա-

կին ընդարձակ միջոցները, այլ և անոր
ամենամանը մասունքներն ալ ամենայն
Ճշգութեամբ չափելու : Ի ստեղաբաշ-
խական զննութիւններով իմացանք որ
երկիրս ալ ուրիշ երկնային մարմնոց պէս
ընդարձակութեան մէջ կեցած է, և
անփոփոխելի օրէնքով մը մի և նոյն շըր-
ջանը կը կատարէ արեւուն վրայ : Այ-
կիրս իրեն այս ընթացքովը մէկ մեծ
շրջանակ մը կը ձեւացընէ, որ զրեթէ
անփոփոխելի է, և աս ձեւը մակարդակ
ծրի խաւարման կը կոչուի, և երկիրս աս
մակարդակ ձեւը իր շրջանով կատարելին
ետեւ՝ նորէն կը սկսի նոյնպէս և նոյն
օրէնքներով կատարելու : Ի ս շարժմուն-
քէս զատ, իմացուեցաւ որ երկիրս ուրիշ
շարժմունք մըն ալ ունի, որով միակերպ
և անփոփոխ կերպով ինքն իր (կամ որ
նոյն է) իր առանցքին վրայ կը դառնայ,
միշտ նոյն զիւքը կը պահէ ու նոյն կէ-
տերուն վրայ հաստատ կը մնայ : Ի ս
առանցքս, որ առանցդ նաւալման կը կո-
չուի, և հասարակօրէն առանցդ հասարա-
կածի կամ առանցդ էրիրէ, ընդարձակու-
թեան մէջ ինքն իրեն միշտ զուգահե-
ռական է, ինչպէս կառք մը արեւելքէ
արևմուտք երթալու ատեն առանցքին
կամ լիսուան երկու ծայրերը միշտ մէկը
հիւսիս ու մէկալը հարաւ կը նային ան-
շարժ, և առանցքը կամ լիսեռը ինքն ի-
րեն միշտ զուգահեռական կ'ըլլայ : Ի նդ
հակառակն երկրիս կեզրոնը արևուն
չորս դին ծրի խաւարման մակարդակին
վրայ դառնալու ատեն՝ ան մեծ ներձեին
ամէն կէտերը կը շօշափէ, և աս երկու
շարժմունքն որ իրարմէ ամենևին կա-
խումն չունին, և միշտ միակերպ կ'ընեն
իրենց անդադարելի ընթացքը, ժամա-
նակին Ճիշդ չափն առնելու որոշ և ա-
պահով միջոցները կը մատակարարեն :

Հիմայ տեսնենք թէ ինչպէս երկրիս
աս շարժմունքներէն ժամանակի Ճիշդ
չափն առնուեր է : ‘ Ա ախ ’ գիտենք որ
մեր աս տկար զգայարանքներով չենք
կրնար ուղղակի իմանալ երկրիս ընդ-
արձակութեան մէջ ըրած անդադար
տեղափոխութիւնը . վասն զի միայն մեր
վրայ ու չորս դինիս եղած բաներուն